

լաւ է հասկանալ, այդ պատճառով էլ Գու-
նայի փոխարեութիւնը լաւ տպագրութիւն
թողցն հասարակութեան վրա: Ինքը բէնէֆի-
ցիանքը, թէեւ իրեն զերեւան մեծ ձերբ տը-
յէ, բայց ունի շատ չնորհալի ձայն, որի շնոր-
հիւ նրա խաղը զուր եկաւ հասարակութեան:
Անսամբը ընդհանրապէս լաւ էր, թատրոնը
հասարակութեամբ լի էր, որը ծափահարու-
թիւններով եւ ընծաներով վարձատրեց իր
վաստակաւոր մշակին:

Մեզ խնդրում են տպագրել հետեւեալ հա-
շիւը: «Ձիւնական պարահանդէսից, որ տեղի
ունեցաւ Թիֆլիսի ժողովարանի դահլիճում
անցեալ յունվարի 21-ին, յօդու հայոց Բարե-
գործական ընկերութեան, ստացվեց մուտք-
տոմսակների վաճառումից տուգանքով—2,099
ր. 45 կ., բուֆէտից—430 ր., հովհաննիսի եւ
սիրապիլիների վաճառումից—217 ր., ընդա-
մէնը 2,764 ր. 45 կ.: Մ. Բախտի, եղել է. դա-
ւիճ—200 ր., լրացուցիչ լուսանկարներ—75
ր., երգչախումբ—70 ր., մարկաներ—76 ր.,
չինասկան պարերի կազմեր—102 ր. 60 կ.,
բուֆէտի ծախս—25 ր. 66 կ., հազուատներ,
կոստիւմներ, սիրապիլիներ, ծառաների եւ միւս
մանր ծախսեր—117 ր. 62 կ., ընդամենը—
894 ր. 73 կ.: Ձուտ արդիւնք մտած է 1,851
ր. 66 կ.: Բացի դրանից սպասվում է մուտք
98 խոտաններից, երեկոյթը կազմա-
կերպող իշխ. Մ. Քուսմանյան յայտնում է իր
խորին չնորհալարութիւնը նկարիչ Գ. Դուր-
յանանից, որ յանձն էր առել դահլիճը զար-
դարել, կապիտան Դ. Մ. Նազարովին, որ
ղեկավարում էր պարերը, Մշակի, «Ճարպը»,
«Тифлисский Листок» եւ «Новое Обозрение»
լրագիրների խմբագրութիւններին, որոնք ձրի
տպագրեցին յայտարարութիւնները, չինական
պարերին բոլոր մասնակցողներին եւ միւս ան-
ձանց, որոնք այս կամ այն կերպով աջակցե-
ին երեկոյթին կազմակերպութեան: Ուշուր նուի-
րատուութիւնները ստացվել են հետեւեալ ան-
ձերից՝ տ. Դ. Մանթաշանից—100 ր., պ. Ա.
Մանթաշանից—50 ր., պ. Կ. Զուբալովից,
Ա. Մէլիք-Ազարեանից, Մ. Փրիգունեանից եւ
Դ. Ի. զաշանից—25-ական ռուբլի:

Մի քանի գիւղատնտեսական ընկերութիւն-
ներ միջնորդութիւն են յարուցել երկրագոր-
ծութեան միջնորդութեան առաջ՝ ազատելու
ամեն տեսակ տուրքերից այն նաւթային շար-
ժիչ մեքենաները, որոնք գործ են ածում գիւ-
ղատնտեսութեան մէջ, նոյնպէս եւ աստիճանա-
բար նուազեցնելու գիւղատնտեսական այն գոր-
ծիքներից եւ մեքենաներից վերցնելու մաքուր,
որոնց արտադրութիւնը Ռուսաստանում մեծ
չափեր է ստացել եւ կարող է առանձին հովա-
նաւորութեան:

«Новое Время» լրագրին հետագրում են կիւ-
մից. «Կիւմի» պոլիտեխնիկական ինստիտուտի
կարմնէտները, լաբորատորիաների եւ ուսուց-
ման օժանդակող այլ հիմնարկութիւնների վրա
ծախսված և արդէն 500,000 ռուբլի, բայց եւ
այնպէս միջնորդութիւն է յարուցված նորից
200,000 ռուբլի նշանակելու մասին նոյն նպա-
տակի համար:

Պետերբուրգի համալսարանը 1901 թ.ին
պարգևներ տուց մի քանի ուսանողների այն
հեղինակութիւնների համար, որ ֆակուլտետ-
ների առաջարկութեամբ նրանք ներկայացրել
էին համալսարանին Այդ ուսանողների թուում
գտնվում են եւ կովկասցի մի քանի երիտա-
սարգներ: Այսպէս՝ ունի մեծ չնորհալի ի-
րաւաւորական ֆակուլտետի ուսանող Գեորգ
Սարգիսովին «Յուսմաբային պատերազմի օրէն-
ների եւ սովորութիւնների կողմնակցի»
վերնագրով գրուածքի համար, Դաւիթ Ուսնե-
լովին (վրացի) չնորհալի և արժաւէ մեղա-
վոյթական մեթոդների վերնագրով գրուած-
քի համար, իսկ արեւելեան լեզուների ֆակուլ-
տետի ուսանող Գեորգ Կապիսովին ունի մե-
ղալ է արված «1712 թ.ին վախճանված Արշիլ
Քաղաւորի աշխատութիւնների պատմական-
գրականական տեսութիւն» գրուածքի համար:

Ժողովրդական լուսնաւորութեան միջնորդու-
թիւնը առաջադրութիւն է արել Կովկասի եւ
արեւելեան նահանգների հետազոտութիւնների
հրատարակութեան համար նպաստ տալ հե-
տեւեալ չափով, 1901 թ.ին՝ երեք հազար ռուբլի-
ով, 1902—1905 թ.ներին՝ վեց հազար ռուբլի,
ստորեւան եւ 1906 թ.ին՝ երեք հազար ռուբլի:

«Россия» լրագիրը հաղորդում է, թէ Տրանս-
կասիայի յայտնի պետական գործիչ չոկոտը Լէյպ-
ցիգում:

որ համարվում է զեպան Ռուսաստանի, Յը-
րանիայի, Հոլանդիայի եւ Բելգիայի կառա-
վարութիւնների մօտ, մեծ-պատի առաջին շա-
բաթվայ ընթացքում ուղեւորվելու է Պետեր-
բուրգ իր պաշտօնին վերաբերող գործերով:

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Փետրվարի 8-ին,
Վարդանանյ տօնի օրը, պատարագից յետոյ,
կայացաւ հանդէս թեմական գաղութի նոր շինու-
թեան մէջ, երկու սեռի հասարակութիւնը լցրել
էր մեծ դահլիճը, որը համառ կերպով զարդար-
ված էր Ուրախիայի է տեսնել, որ գեղեցիկ
սեւոր այգիների հանդէսներին աւելի մեծ թուով
լաճախում քան տղամարդիկ: Բայց ինչ օգուտ
դրանից, թեմական դպրոցը պատրաստվում էր
այսօրվայ տօնին մի ներկայացում տալու
յօգուտ չըաւոր աշակերտներին, բայց այսօր-
վայ կանանցից եւ օրիորդներից ոչ մէկը յան-
ձն չառաւ մասնակցել ներկայացմանը եւ այդ
պատճառով էլ գործը խախտվեց:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Ռուս սիրող-
ների մի խումբ փետրվարի 4-ին, Ղուբայի կը-
լուրի գեղիկում, ներկայացրեց «На лѣтнемъ
покоженіи» եւ «Мой маленький капризъ» պիես-
ները: Եկամուտ եղաւ հարկւր ինչը ռուբլի,
որը յատկացվելու է յօգուտ նոր բացվելիք
հիւանդանոցի: Ուղագողների մէջ աչքի էին
ընկնում օրիորդ Բլանժիկ, տիկին Ամբրուսի-
վա եւ օրիորդ Յիշմաձէ: Ուղը կենդանի
անցաւ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Գերմանական այդ կայսրութիւն անուանալի
հիւանդ է «Rheinisch-Westfälische Zeitung»
լրագրի ասելով՝ նա հիւանդ է շրուշուքով,
որի վրա բարդվել է նաեւ երկրամուշէքների
հիւանդութիւնը: Բժիշկներն այս վերջին հի-
ւանդութիւնը համարում են քաղցիկ: Առող-
ջացնել նրան անկարելի է: Բժիշկների ամբողջ
կախառնեքը ուղղված է այժմ մի նպատակի
միջոց—որքան կարելի է, յետաձգելու անխու-
սակին մահվան օրով: Կայսրուհու վստա-
գաւոր դրութեան ապացոյց է նաեւ այն, որ
Վիլհելմ կայսրը չէ հիւանդում մօտ օրերի:

—Անգլիական Էդուարդ VII թագաւորի
թագադրութիւնը տեղի կունենայ այս տարվայ
յունիս ամսին: Անգլիական պարլամենտի այժ-
մեան նստաշրջանի բացման օրը իրականացան
պատգամաւորները մի ժողով կազմեցին, որի
մէջ վճռեցին չը մասնակցել ոչ մի հանդէսի,
մինչեւ որ Իրլանդիայի թագաւորութիւնը չը
բարեփոխէ եւ հարաւ-աֆրիկական անարդար
պատերազմը չը վերջանայ:

—«Daily Mail» լրագրի ասելով՝ Դէվիտ, Օ-
րանդ գետը անցնելուց առաջ, տեղեկացրեց
բօլերներին, որ երկու հանրապետութիւնների
նախագահի պաշտօնը այժմ կատարում է Հեր-
ցօգ եւ թէ նա գտնվում է Պաարլի չըջակալ-
քում 4000 մարդկանցով:

—«Frankfurter Zeitung»-ի խօսքով՝ Միա-
ցեալ-Նահանգների կառավարութիւնը պաշտօ-
նապէս հաղորդեց կուբացիներին, թէ երեք
ածխային կայարան է պահանջում կուբե կղզ-
քում—Հաւանա, Սիէնթաուս եւ Սանտ-Եա-
գօ եւ պնդում է այն բանի վրա, որ Կուբան
ընդունի Մոնրօի վարչապետութիւնը եւ այն
բոլոր պայմանները, որոնք համահաւասար են
ամերիկական գերիշնաւթիւնին:

—Անգլիական պարլամենտի բացման ժամա-
նակ համալսելիքի ժողովի անդամների համար
այնքան քիչ տեղ էր թողնված, որ երբ նրանք
սկսեցին գնալ դէպի լորդերի ժողովի դահլիճը,
տեղի ունեցաւ այնպիսի խռնակութիւն,
որ շատ պատգամաւորներ վնասվեցին: Այս-
պէս, օրինակ, Տրիտոն պատգամաւորի կողմ
նուիրեց մէկը կտորիկ: Իրլանդիայի գեներալ
—ատուրները ուղի տակ ընկաւ: Մի ոտակաւ
ստանալու եղաւ եւ հաջիւ աղաւթից: Համայն-
քների ժողովի նիստերը մէկում նորիս այդ մա-
սին հարց բարձրացաւ: Պատգամաւոր Էլլիս հարց-
րեց Բալֆուրին, թէ ինչ իրաւունքով համայն-
քների ժողովի անդամներից անվեցին լորդերի
ժողովում: Նրանք համար նշանակված տեղերը
եւ արվեցին կողմնակի անձանց: Բալֆուր պա-
տախտեց, թէ, որքան նրան յայտնի է, պար-
լամենտի հանդիմանաւոր բացումը տեղի ունեցաւ
այս անգամ այնպէս որպէս տեղի է ունեցել
առաջ նոյնպիսի դէպքում: Պատգամաւոր
Գարու-Դալի առաջարկեց խառն մասնաժողով
նշանակել երկու ժողովի անդամներից ընկելու
համար այն հարցը, թէ ինչ միջոցների պէտք
է դիմել ապագայում այդ տեսակ ջաւալի դէպ-
քերի առաջն անգամ համար: Բալֆուր պա-
տախտեց, թէ նա չէ կարող ոչինչ ասել եւ
պէտք է խորհրդակցել այդ մասին տեղեակ ան-
ձանց հետ: Վիսթարմութիւնները վերջացան
հետեւեալ զուարճալի միջնադէպով: Պէտք
է ասել, որ իրլանդացիները չէին մասնակցում
պարլամենտի բացման հանդիսին: Նրանցից
պատգամաւոր Գրիլ հարցրեց Բալֆուրին, թէ
յայտնի է նրան, որ իրլանդացիները շատ զոհ-
տում, որ պարլամենտի հանդիմանաւոր բացման

ժամանակ տեղ չը գտնվեց համայնքների ժո-
ղովի անդամների համար: Եւս շատ ուրախ
եմ—պատասխանեց Բալֆուրը—որ դէժ մի
քանի պատգամաւորներ զոհ մնացին: Պատ-
գամաւորները ծիծաղում են:

—«Neue Freie Presse» լրագրի Բերլինի
թղթակիցը հաղորդում է. Ալթմանհաւատաղ-
բիւրից յայտնի է, որ Պետերբուրգի գերմանա-
կան նախկին դեսպան գեներալ Վէրդեր Պե-
տերբուրգ է գնում դիպլոմատական մի շատ
նշանաւոր յանձնարարութեամբ: Ինչպէս յայտ-
նի է, գեներալ Վէրդեր ուսւ եւ գերմանական
կառավարութիւնների առաւելի վստահութիւն
է վայելում եւ շատ անգամ արդէն նրան ա-
նդովել է վերացնել Գերմանիայի եւ Ռուսաս-
տանի միջեւ ծագող թիրախացութիւնները:
Նրա ներկայ ճանապարհորդութիւնը դէպի
Ռուսաստան նշանակալի նպատակ ունի, որով-
հետեւ նշաններից երեւում է, որ արեւելեան
Ասիայում տեղի ունեցած անցքերը խախտել են
Գերմանիայի եւ Ռուսաստանի միջեւ եղած բարի
յարաբերութիւնները: Դրան աւելացաւ Վիլհելմ
կայսրի Անգլիա գնալը, որին կամենում են քա-
ղաքական նշանակութիւն տալ: Գեներալ Վէր-
դերի միտքնայն այդպիսով նպատակ ունի ոչնչ-
յացնել այն կասկածը, որ կամենում են գցել
Ռուսաստանի եւ Գերմանիայի միջեւ:

—«Ալթման» լրագրի Դիւսելդորֆի հաղոր-
դում են, որ Կարակիւնիկի եւ Միլլիքի քիւրդ
աշխրհների մէջ սարսափելի կոխ է անվել:
Կ. Պօլսի գնացել է այնտեղ Բէլա-Էդրին-փա-
նան եւ ընծաներ է տարել այնտեղի աշխրհ-
ների պարագլուխներին՝ նրանց խաղաղեցնելու
համար:

—Կովկասից եւ Միջին-Ասիայից Կ. Պօլսի հա-
ւաքված ուխտաւորները 250 ամենապատուաւոր
անձանց թույլ տրվեց ներկայ լինել սէլամըլի-
քին սուլթանին տեսնելու համար: Երբ սուլ-
թանը, բաց կառքի մէջ նստած, երեսուց ուս-
նապատակ մասնակցականներին, «փաղիչ»
չըը նայա՝ ողեւորված բացազանցութիւններ
լուցեցին: Արդւոյ Համիդը քայլալի օղջին տեսեց
եւ առանձնապէս էլ իր սարկներն ուղարկեց
իր սկիւտայի գեներալ կինսա-փալայի միջոցով
նոյն սէլամըլիքին ներկայ եւ եւ ֆաթիկական
Տրիպոլիսի պատգամաւորութիւնը, որ հաւա-
տարիմ հպատակութեան ուղերձ եւ ընծաներ
մատուցեց սուլթանին:

—Միւնխենի «Allgemeine Zeitung» լրագրի
Թէշթանի թղթակիցը հաղորդում է յունվարի
7-ից գրած իր նամակի մէջ, որ պարսկական
փոխաւորութեան յունվարի տոյնները մոշնվի-
ցին առանց որ եւ է տոտանան, այնպէս որ
պարսկական պետական բանկում դեռ նշա-
նաւոր ազատ գումարներ մնացին: Այդ նը-
պատաւոր դրութեան ազդով համարձ ան-
ցեալ տարվայ ապրիլի 1-ից միայն, չը նախելով
այն բանին, որ մաքսային հարկերը բարձրա-
ցված էին յօդու կառավարութեան, եւ որ
երկրի հարաւային նահանգներում ծագած ան-
կարգութիւնները, չնորհիւ այդ օրինական եւ
անաշու բարձրացման, նշանաւոր չափով պա-
կանցրին մաքսային հարկերի գումարը: Այդպի-
սով մաքսատուի կառավարութիւնը Նուսու-
ձեւում էինք առաջին տարին աշող հետե-
ւանքներ տուեց, եւ այդ պատճառով կարելի
է յուսալ, որ այդ հանգամանքը կը տրամա-
դրէ կառավարութեան պետական ուրիշ հիւ-
ղերում եւս մոշնել որպէս փորձ օրինակա-
ւորութեան եւ կարգի սկզբունքները: Շահի ճա-
նապարհորդութիւնը ամենեւին չարագացրեց
բէֆօրմների մոշնելը: Ամեն ինչ մնաց առաջ-
վան պէս, մինչեւ անգամ ժամանակաւոր մի-
նալարութեան անստիկ արտադրութիւնը վա-
նիստները եւ բարձրատեսիլան պաշտօնաները
մնացին իրանց տեղերում: Առաջ եւս կարելի
էր նախաեսել, որ այդ ճանապարհորդութիւ-
նը ձեռնարկված էր բացառապէս գումարնու-
թեան համար եւ որ նրա մասնակցներից ոչ
մէկի գլուխ էլ չէր գլուխ կապել այդ ճանա-
պարհորդութիւնը որ եւ է ուսանելի նպա-
տակների հետ: Թղթակիցը, ըստ երեւոյ-
թին, քիչ է հետաքրքրվում եւ ուսաց քա-
ղաքականութեամբ: Նրա խօսքով, Ռուսաստա-
նը շրջապատեց եւսանողն գործունէութիւն
ցոյց տալ Կարակաւտանում եւ նրա շանքերը
անցնել դէպի հարաւ, անվիրական աղղեցութեան
կենտրոնը, աւելի եւս նկատելի են դառնում
Այդպէս, զօլտուր Բաուշ ֆոն-Տրաուբէրգը,
ուսացալ աշխարհագիրը, որը իր ուսումն ա-
ռել է Գեյմանիայում, իր կառավարութեան
հրամանով եւ մի բարձրատեսիլան պաշտօնային
ուղեկցութեամբ պտտում է այն բոլոր ճանա-
պարհները, որոնք Թէշթանից անում են դէպի
Թիւրքաց սահմանը եւ Պարսից ծոցը: Միաժա-
մանակ Թէշթանի ուսաց դեսպանատան
առաջին քարտուղարը, յայտնի դիպլոմատն ու
դիւն, պ. Նէլլիով, այնտեղ նորիս եկած օֆի-
ցիւրների հետ միասին, ճանապարհ ընկաւ այնտե-
րից եւ գնաց դէպի հարաւ: Նորիս տարած-
ված տեղեկութիւնները՝ չոգնաւային հաղոր-
դակցութիւն հաստատելու Օղէսայի եւ Պար-
սից ծոցի միջեւ եւ Բուլղարիա ուսաց հիւ-
պատուութիւն հիմնելու մասին յամենայն
դէպ շատ բան են պարզում: Սե օրով հետեւ
պ. Յոն-Տրաուբէրգի գիտական ճանապար-
հորդութեան ծրագրի մէջ մտնում է եւ Բիւր-
մանշանը, ուրեմն, շատ հաւանական է, որ
միաժամանակ նպատակ կայ հաղորդակցու-
թիւն հաստատել Բաղդադի անցալայի եւ
կաթողու հետ Ռուսիայի առեւտուրը ձրգ-
տում է նուաճել բացառապէս անգլիական ազ-

դեցութեան տակ գտնվող չոկաները հարա-
ւային Պարսկաստանում երկու կողմից, որով-
հետեւ ուսաց պարսկները աւելի եւ աւելի
մտնում են Սպահան եւ Շիրազ, պարսկական
զիւաւոր չոկաները: Այդ կողմից երեք ասարի
առաջ ուսաց հիւպատուութեան հիմնելու Շի-
րազում մեծ օգուտ բերեց, Յամենայն դէպս,
մեծ-բրիտանական շանքը այդ չոկաներում
գոհացուցիչ կերպով չեն պաշտպանվում Ռու-
սական ուղղակի հաղորդակցութիւնը: Պարսից
ծոցի հետ այդպիսով գգալի հարուած կը հաց-
նէ ոչ միայն անգլիական առեւտրին, այլ եւ
Մարսիլի վրայով ֆրանսիական շաքարի նա-
ւաւոր ներմուծման այստեղ, այնպէս որ Ռու-
սաստանը այստեղ իր դաշնակցին վստահաւոր
մրցակից է հանդիսանում:

ԻՍԱՆ ԼՈՒՐԵՐ

Սթէնքի լրագիրների տաք վիճարկութեան ա-
տարկէ է դարձել այժմ անգլիական պետական բանկի
այն յայտարարութիւնը, թէ լրանում է հնդկաստա-
նում վախճանված յունվարի հապապ Մէլաշ-օլլիի
50 տարի առաջ կատարած գումարի բանկում պահելու
ժամանակամիջոցը: Կատվով նրա ամբողջ կարողու-
թիւնը դրվեց անգլիական բանկը պահպանութեան
համար, որպէս զի այդ ամբողջ գումարը իր
տոկոսներով 50 տարուց ընդոտ արիւ կատարել ժա-
նանգներին: Ժամանակամիջոցն անցաւ, դրամագլուխը
աճելով հասել է 44,800,000 ֆունտ ստերլինգի, իսկ
Մէլաշ-օլլիի ժամանակը դեռ չեն երեւում Յունաս-
տանում: Միայն նորիս Ֆիլիպպոսով ինչ որ այդ
հաղին ժամանգութեան պրեմիէնդներն են լայնու-
նել: «Ստաթ», «Էիւօպոս», «Էֆէլեթիա» եւ ուրիշ լրա-
գիրներ, Կ. Պօլսի յունական դեսպանի լուրը ուս-
գրութիւնն են դարձնում գլուխակալ աղի այդ ժառան-
գութեան վրա եւ պարտաւորեցնում են նրան «հեռաց-
նել կեղծ-ժառանգներին» եւ հնարաւորութիւն տալ
կառավարութեանը ստանալ այդ գումարը անգլիական
բանկից, որով միանգամայն վերջ կը դրվի հէլենական
կառավարութեան ֆինանսական դժուարութիւններին:

Ռուսական հետաքրքրի տեղեկութիւններ է հաղոր-
դում «Новый Вѣст» կանանց ամսուրի մասին Թիւր-
քիստան: Պէտք է նկատել, որ հարմ էլ կարող ընկ-
նել Թիւրքիստանի. դա հակառակ կը լինէր կրօնի,
սուլթանը համարվում է հայր բոլոր Թիւրքերի, եւ այդ
պատճառով էլ նա չէ կարող պապվել Թիւրքիստա-
նից հետ: Հարմը բացառապէս կառավարվում է
միմիայն էրեքեզներէից, Պէրեքեզներէի ձեռք ըն-
կելու համար: Սակայն Թիւրքիայի նահանգներն է-
նուարկվում մի հաստատմամբ, սուլթանի սիրելի
ներեց մէկը: Սուլթը առաջ անցնելով, սուլթանի հա-
ւատարմաւորը ընտրում է գեղեցիկ, աղջիկներ եւ զը-
նում է նրանք ծնողներից եւ աղգականներից: Վերջի-
ները զինուորի ապրանքը յօժարութեամբ ծախում
են կրօնական ֆանատիկութիւնից եւ շահաւորու-
թիւնից դրված, որովհետեւ յատկաւ խոշոր գումար-
ներ են վճարվում, այն է 100—300 սակի: Բայց ա-
րեւելի ժողովի համար աւելի էլ մեծ գումար է տրը-
վում: Գնված աղջիկները ուղարկվում են Ս. Պօլսի,
այնպէս որ այդ աղջիկները մայրաքաղաքը հասնելու
օրը «Էլիզաբեթովի» բնակիչները սատակ լուղվում են,
մասնաւոր օգախիները, որովհետեւ նրանք նոր եկած
ների մէջ լաճախ հանդիպում են իրանց աղգական-
ներին կամ երկրացիներին եւ աղգականը նորութիւն-
ներ իմանում իրանց հարկներից: Սուլթանը նոյնպէս
հետաքրքրվում է իր նոր կանանցով, եւ Եթէ նրանք
մէջ իմում են աչքի ընկնող գեղեցիկութիւններ, աղ-
պէս աղղութեամբ կառարող պաշտօնեան ստանում է
ահադին ընծաներ եւ պէն:

Հարմը յիշելու մի ուրիշ աղբիւրն այն է, երբ
միջնորդները եւ բարձրատեսիլան պաշտօնեաներն են
ընծայա՝ տալիս սուլթանին: Վերջիները նոյնպէս
գնում են աղջիկները: Սուլթանի ընծաները գնահատվում
են սուլթանի կողմից, բացի դրանից, միջնորդներից
չառեցի գեղեցկութեամբ եւ պա հալը, որ իրանց զը-
նում աղջիկը ժամանակով կարող է սուլթանին կին
դառնալ եւ իր աղղեցութեամբ մշտական պաշտպան
լինել իրանց: Եթէ այդ բոլորն անկացնելու եւ այն
որ բացի պաշտօնեաներից այնտեղի գնում են եւ ա-
ռանձին գործակալներ, այն ժամանակ պարզ կը լինի,
թէ ինչ անարդարականացնող աղղեցութիւն տնի այդ
բոլոր ֆոքը-Սախի աղղարակութեան վրա:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻ

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27